01 Oct 2010

Խորհրդակցության (բ) Կենտկոմի յեվ Բագվի Կոմիտեի Մեթոդ-Բյուրո

Կուսակցության ամբողջ ցանցի համար

32

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇՆԱՆԱ-ԶՄԵՌԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ԳԻՆԸ 80 ԿՊԿ.

656.2
Ա-70

ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ
Հ. Պետ. Գրադարան
ՀԱՍՀ—ՍՍՌՄ
Ա. Մեծարենցի անվան

ԱԶԵՐՆԵՇՐ—1932

13 FEB 2013

24.418

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ՑԱՆՑԻ ՀԱՄԱՐ

ԹԵՄԱ.—«1932-33 ԹՎԻ ԱՇՆԱՆ—ԶՄՐԱՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. ՊԱՐԶԵԼ.—Յերկաթուղային տրանսպորտի 1931 թվի աշխատանքի արդյունքների ու 1931-32 թվի աշնան-ձմրան փոխադրությունների պլանը չկատարելու պատճառները։

2. 1932-33 թվի աշնան-ձմրան փոխադրությունների խնդիրները ու սրանց հաջող կատարման անհրաժեշտ պայմանները։

3. 1932-33 թվի աշնան-ձմրան փոխադրությունները նախապատրաստելու գործում դպրոցի (խմբակի) մասնակցության ձևերը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԸ

I. Յերկաթուղային տրանսպորտի նշանակությունը Խորհրդային Միության ամբողջ ժողովրդական տնտեսության համար:

II. Յերկաթուղային տրանսպորտի 1931-32 թվի աշխատանքի արդյունքներ:

1. 1931 թվին և 1932 թվի առաջին յեռամսյակում յերկաթուղային տրանսպորտի աշխատանքում յեղած խոշոր հաջողությունները շոգեկառքերի և վագոնների վաղքի, նրանց փոչանալը նվազելու, բեռնաշրջանառությունն ավելանալու վերաբերմամբ։

2. Յերկաթուղային տրանսպորտի աշխատանքում յեղած բարենպաստ տեղաշարժի պատճառները։ Կուսակցության հատուկ ուշադրությունը յերկաթուղային տրանսպորտին, հարվածայնությունն ու սոցմրցությունը, յերկաթուղիների ավելի վորոշակի աշխատանքը և այլն։

3. 1932-32 թ. աշնան-ձմրան փոխադրությունների պլանը թերակատարելու պատճառները (138,5 միլիոն տոն,—պլանի 83%-ը)։—Փոխադրությունների համար ուշ պատրաստվելը, ընկ. Ստալինի վեց ցուցմունքների հիման վրա աշխատանքը վերակառուցել չկարողանալը և այլն։ Մի շարք յերկաթուղիների թույլ աշխատանքը։

III. 1932-33 թվի աշնան ձմրան փոխադրությունների հիմնական խնդիրները

1. Յերկրի բուռն կերպով աճող ժողովրդական տնտեսության կողմից յերկաթուղային տրանսպորտին արվող ավելի մեծ պահանջները 1932-33 թվին։ Բեռնաշրջանառությունը 320 միլիոն տոննի հասցնելու խնդիրը (1931-ին—247 միլիոն տոնն), փոխադրության ինքնարժեքի 10%-ով իջեցնումը, վառելիքի կրճատումն 9%-ով, շոգեկառքերի միջին որեկան վաղքը 167 կիլոմետրի հասցնելը (1931-1932 թվին—139 կիլոմ.), և վագոններինը՝ 128 կիլոմետրի (1931 թվին—92 կիլոմ.), աշխատանքի արտադրողականության ավելացումը 26,3%-ով, միաժամանակ աշխատավարձի աճումը 13%-ով և այլն։

2. Այս տարվա մայիս ամսին տրված հրամանը աշնան-ձմրան փոխադրություններին պատրաստվելու մասին, վորպես աշնան-ձմրան փոխադրությունների նախապատրաստական աշխատանքների մարտական ծրագիր։ Այդ պլանի ռեալ լինելն ու նրա դիֆֆերենցիացիան ըստ յեռամսյակների։

3. Ճանապարհների՝ ավելի շատ գնացքներ բաց թողնելու ունակության ավելացումը. «նեղ տեղերի» վերացումը, ռելսների, փոխադրիչների, շպալների փոխումը և այլն. սարքավորումների նորոգություն, նոր ուղիների կառուցում, գոյություն ունեցողների նորոգում։ Առանձին ուշադրություն վճռական ուղղությունների, մանավանդ Դոնբասից յելնող յերկաթուղիներին և այլն։ Պայքար գնացքների կանոնավոր յերթևեկության, գրաֆիկների իրականացման համար և այլն։

4. Շարժական կազմի նախապատրաստություն—շոգեկառքի ոգտակար աշխատանքն որեկան հասցնել 11 ժամի ու վագոնինը՝ $8^1/_2$ ժ.։ Մինչև 1932 թվի սեպտեմբերի 1-ը նորոգել 11. 400 շոգեկառք. պայքար նորոգման վորակի համար։

5. Վագոնային պարկի նախապատրաստություն. — հիվանդ վագոնների թիվը հասցնել իրանց ընդհանուր քանակության 1,7%-ին, ցիստերներինը՝ 1%-ին 30 հազար վագոնում ավտոարգելակ սարքել, արագացնել վագոնները պարբերական ստուգումից անցկացնելը և այլն։

6. Տրանսպորտի վերակառուցման խնդիրները. — նախապատրաստական աշխատանքներ կատարել յերկաթուղիները, մանավանդ հիմնական ուղղությունների յերկաթուղիները ելեքտրիֆիկացիայի յենթարկելու համար, 600 միլիոն ռուբլու ներդրում՝ տրանսպորտի վերակառուցման և ռացիոնա-

լացման համար.—շարժական կազմի ավելացումը 1310 շոգեկառքով և 50 հազար վագոնով, 500 հազար տոն ռելսներ և այլն։

IV. Անհրաժեշտ պայմաններ—1932-33 թվի աշնան-ձմրան փոխադրությունները հաջողությամբ կատարելու համար.

1. Աշխատանքի վերակառուցում՝ ընկ. Ստալինի ցուցումունքների հիման վրա։ Անդիմության վերացում և պայքար ղուգերթի համար։ Բարելավում դիսպետչերյան կապի և ազդանշանման։ Շարժման բարելավում, շարժական կազմի ռացիոնալ ոգտագործում, խստագույն դիսցիպլինա յերթևեկության ցուցակներն ու գրաֆիկները կատարելու գործում։

2. Աշխատանքը կազմակերպելու և տնտեսհաշիվն ամրապնդելու խնդիրը։ Հավասարանքի վերացում։ Տնտեսհաշվի ամրապնդում և բոլոր յերկաթուղիները, համապատասխան բալանսի, սեփական ծախսերի փոխացում։

3. Յերկաթուղայինների նյութական-կուլտուրական դրության բարելավում։ Առաջին հերթին բնակարանային պայմանների բարելավում. այդ նպատակով 100 միլիոն ռուբլի (1931 թվին 49 միլ. ռուբլի) բաց թողնելը։ Ամեն կերպ բարելավում տրանսպորտային կոպերացիայի աշխատանքի. յերկաթուղիների սեփական պարենային բազայի, բանջարանոցների, անասնաբուծական տնտեսությունների, ոժանդակ ձեռնարկությունների ծավալում և այլն։

4. Աշխատանքային դիսցիպլինայի բարձրացում և դեպի աշխատանքը սոցիալիստական վերաբերմունքի դաստիարակություն։ Անողոք պայքար լոդրների, սպեկուլյանտների և դատարկապորտների դեմ։ Աշխատանքի վորակի բարձրացում յերկաթուղիների բոլոր ողակներում և ամեն տեսակ ուշադրություն տրանսպորտում կադրեր պատրաստելու գործին։

5. Կուս-մասսայական աշխատանքի ուժեղացում տրանսպորտում։ Ամեն կերպ ամրապնդում տրանսպորտային բջիջների և նրանց խնդիրները՝ մասսաների նախաձեռնությունն ու ստեղծագործական ենտուզիազմը գլխավորելու, սոցմրցությունն ու հարվածայնությունը զարգացնելու գործում։ Ամրապնդումն ստորին ողակների—ցեխի, բրիգադի, հերթափոխության և այլն։

V. Աշնան-ձմրան փոխադրությունների նախապատրաստության խնդիրները Բագվի հանգույցում.

VI. Քաղդպրոցի (խմբակի) և մյուսների անելիքը—աշնան-ձմրան փոխադրությունների նախապատրաստման գործում (մանավանդ, ինարկե. յերկաթուղում).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

1. Առաջադրության աշխատանքի նյութ։

2. „Պրավդա“ № 147, ընկ. Ստալինի ճառը՝ Սվերդլովսկի յերկաթուղայինների ժողովում։

3. „Բակ, Բաբոչիյ“, 1932. հուլիսի 5, 1932 թ. հուլիսի 6 և ոգոստոսի 8։

4. „Պրավդա“—1931 թ. հուլիսի 1, 1932 թ. հունիսի 13, 1932 թ. հունիսի 23, 1932 թ. հունիսի 30, 1932 թ. հուլիսի 10, 1932 թ, հուլիսի 22, 1932 թ. հուլիսի 28։

5. Ստալին, „Լենինիզմի հարցերը“—կենտկոմի քաղաքական հաշվետվությունը 16-րդ համագումարում։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1. Առաջադրության առաջին գլուխը ներածական բնույթ ունի և ղեկավարը լուսաբանում է ներածական խոսքում։ Դրա համար առանձին գրականություն չի ցույց տրվում։

2. Առանձին ուշադրություն պետք է դարձնել առաջադրության հինգերորդ և վեցերորդ գլուխները պարզելուն։ Անհրաժեշտ է տեղական նյութերից ոգտվելը. ուստի տրանսպորտի խմբակներում և դպրոցներում այդ զբաղմունքի համար անհրաժեշտ է հրավիրել տնտեսավարներից մեկին՝ կոնկրետ նյութը վերլուծելու համար։

3. Քաղդպրոցը (խմբակ) և այլն պարզում է աշնան-ձմրան փոխադրությունների նախապատրաստությանը ցույց տալիք իր մասնակցության ձևերը, որինակ՝ բրիգադ ջոկել հետազոտելու համար, աշնան-ձմրան փոխադրություններում տվյալ ձեռնարկության անելիքներն ու նրա պատրաստ լինելու աստիճանը և այլն, մի շարք գործնական առաջարկություններ է նշում, վոր համաձայնեցնում է տնտեսավարի հետ և աշխատում իրականացնել։

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ հաջողություններ ունենք 1931 թվի յերկաթուղային տրանսպորտի աշխատանքում։

2. Վորո՞նք են 1931-1932 թվին աշնան-ձմրային փոխադրությունների պլանի թերակատարման պատճառները։

3. Վորո՞նք են յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման հիմնական խնդիրները։

4. Վորո՞նք են 1932-33 թվին յերկաթուղու ավելի շատ գնացքներ բաց թողնելու ունակությունն ավելացնելու, վագոնային պարկի և շարժական կազմի նախապատրաստության ասպարիզում յեղած խնդիրները։

5. Ի՞նչ նշանակություն ունեն ընկ. Ստալինի 6 ցուցմունքները աշնան-ձմրան փոխադրությունների պլանը հաջող կատարելու գործում։

6. Վորո՞նք են տրանսպորտում աշխատանքային դիսցիպլինան բարձրացնելու և կուս-մասսայական աշխատանքն ուժեղացնելու խնդիրները։

7. Վորո՞նք են յերկաթուղայինների նյութական—կուլտուրական մակարդակը բարելավելու ասպարիզում յեղած խնդիրները։

8. Ի՞նչպես է Բագվի յերկաթուղային հանգույցի աշխատանքի դրությունը և վորոնք են նրա բարելավման խնդիրները։

Կազմեց ԱՆԱՇԿԻՆԱ

Թարգմ. Մ. Փ—ԴԱՆԵԼՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Լսելով ընկ. Միրոնովի հաղորդումը՝ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը ժատնանշում է Անդրկովկասյան յերկաթուղինների բացահայտ անբավարար դրությունը, յերկաթուղային տրնտեսության ճյուղերի վերաբերմամբ հիմնական չափանիշների չկատարելը։

Անդրյերկրկոմը նշում է, վոր յերկաթուղում ստեղծված դրության,—վորը, մասնավորապես, իր արտահայտությունն է գտել վերջին ժամանակներս խոշոր պատահարների (Բագու, Գորի և այլն) դեպքերի շատացման մեջ, հիմնական պատճառը կայանում է կուսակցության և կառավարության՝ միանձնավարության մասին տված դիրեկտիվների ուղղակի խախտման և աշխատանքային դիսցիպլինայի վատ դրության մեջ՝ թե բանվորների ու ծառայողների շրջանում և թե յերկաթուղու և շահագործական ռայոնների ղեկավար որգաններում։

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը վորոշում է.

1. Հավանություն տալ Հաղ. Ճանապ. Ժողկոմի տեղապահ ընկ. Միրոնովի՝ Անդրկովկասյան յերկաթուղու դրության մասին տված հրամանին։

Առաջարկել յերկաթուղու կուսակցական, կոմյերիտական և պրոֆեսիոնալ կազմակերպություններին լայնորեն մշակել այդ հրամանը կուսակցական ու կոմերիտական բջիջների ժողովներում, բանվորների, ինժիներա-տեխնիկ. սեկցիայի ժողովներում և կոնկրետ միջոցառումներ մշակել՝ տվյալ արտադրական միավորին հարմար աշխատանքի դրությունը լավացնելու և աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու համար։

Սեպտեմբերի 3-ին ամբողջ Անդրկովկասյան յերկաթուղում և Զակժելդորստրոյում միասնական կուս. որ անցկացնել՝ ընկ. Միրոնովի հրամանը մշակելու համար։

Պարտավորեցնել հանրապետությունների կենտկոմներին, կուսակցության քաղկոմներին և ռայկոմներին նշանակել կուս-գործիչներ յերկաթուղային կուսկազմակերպություններին ոգնելու համար։

2. Մատնանշել ուղու և ռայՏՊՈ-ի չափազանց անբավարար աշխատանքն՝ ինքնամթերումների և ամբողջ բանվորական մատակարարման կազմակերպման վերաբերմամբ։ Պարտավորեցնել ԶակԴՈՐՏՊՈ-ին աշխատել անհապաղ իրագործելու ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի վորոշման ընկ. Միրոնովի հրամանի մեջ մատնանշված միջոցառումները՝ բանվորական մատակարարման վերաբերմամբ։ Առաջարկել ԶակԴորՏՊՈ-ին ամեն տասն որը մեկ անգամ զեկուցել Անդրյերկրկոմին ինքնամթերումների պլանի ընթացքի, բանջարաբուծության և անասնաբուծության զարգացման մասին՝ թե ԴՈՐՏՊՈ-ի սիստեմում և թե բանվորների ու ծառայողների անհատական տնտեսությունների վերաբերմամբ։

Նախազգուշացնել ԴՈՐՏՊՈ-ի ֆրակցիային, վոր այդ միջոցառումների չկիրառումը կհամարվի վորպես կուսակցության դիրեկտիվների խախտում։

3. Մատնանշելով Հաղ. Ճանապ. Ժողկոմատի դիրեկտիվների և ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի վորոշումների միանգամայն անբավարար կենսագործումը,—վոր վերաբերում են Անդրկովկասյան յերկաթուղիներում տնտեսհաշվարկը լավացնելուն, գերածախքի վերացնելուն և աշխատավարձի պարտքերը մինչև ոգոստոս 15-ը լիկվիդացիայի յենթարկելուն, առաջարկել յերկաթուղու դիրեկտոր ընկ. Պոդդիյեվին ապահովելու մատնանշված դիրեկտիվների լիակատար կենսագործումը։

4. Սույն վորոշումը և ընկ. Միրոնովի հրամանը հրապարակել մամուլում, պարտավորեցնել յերկրային, հանրապետական և ռայոնական թերթերին սիստեմատիկորեն լուսաբանել այդ դիրեկտիվների կատարման ընթացքը։

ԸՆԿ. ՄԻՐՈՆՈՎԻ ՀՐԱՄԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անդրկովկասյան յերկաթուղու վերաբերմամբ ընկ. Միրոնովի տված հրամանին բացառիկ տնտեսական-քաղաքական նշանակություն տալով՝ Ադրբեջանի յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի առողջացման գործի, տրանսֆինպլանի կատարման համար կուսակցական, պրոֆեսիոնալ և տնտեսական կազմակերպությունների բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկելու, աշխատանքային դիսցիպլինան վճռականորեն բարձրացնելու համար՝ Ադրյերկրկոմի վորոշման համապատասխան, Ադրկոմկուսի (բ) կենտկոմի և Բագկոմի քարտուղարությունը վորոշում է.

1. Ընկ. Միրոնովի հրամանը մշակել Բագու-Բալաջարի հանգույցի բանվորական և կուսակցական ժողովներում սեպտեմբերի 5-ին, իսկ 3-րդ եքսպլոատացիոն ռայոնի ու Զուլֆայի յերկաթուղային բջիջներում—սեպտեմբերի 7-ին։

2. Պարտավորեցնել կենտկոմի կազմ-հրահանգչական բաժնին մոբիլիզացիայի յենթարկել 40 զեկուցողներ՝ մշակելու համար յերկաթուղային տրանսպորտի հիմնական բջիջներում ընկ. Միրոնովի հրամանը և Անդրյերկրկոմի վորոշումը՝ Անդրկովկասյան յերկաթուղիների դրության մասին։

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Զերժինսկու ռայկոմին զեկուցողներով ապահովել Բագու-Բալաջարի հանգույցի բոլոր կուսակցական և բանվորական ժողովները՝ սեպտեմբերի 5-ին։

3. Սեպտեմբերի 2-ին, առ. ½ ժ. 9-ին, Ադրկոմկուսի (բ) կենտկոմի շենքում հրավիրել բոլոր նշանակված զեկուցողների հրահանգչական խորհրդակցություն։

Հրահանգչական զեկուցումը հանձնարարել ընկ. Գուրվիչին։

4. Առաջարկել 3-րդ եքսպլոատացիոն ռայոնի վարչությանը՝ հրատարակել ընկ. Միրոնովի հրամանը 1,000 որինակ ռուսերեն և 1,000 որինակ թուրքերեն, ուղարկելով այն 3-րդ ռայոնի բոլոր արտադրական ձեռնարկներին, կայարաններին և կիսակայաններին։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂԿՈՄԻ ՏԵՂԱՊԱՀ ԸՆԿ. ՄԻՐՈՆՈՎԻ ՀՐԱՄԱՆԻՑ

Չնայած բոլոր հնարավորությունների գոյության, բավականաչափ զինվածության (ուղևորելու ընդունակություն, շարժական կազմ, վառելիքի մատակարարման պայմաններ, առանձնապես նպաստավոր կլիմայական պայմաններ յերկաթուղու աշխատանքի համար ամենամեծ տարածությամբ) Անդրկովկասյան յերկաթուղիների որինակելի աշխատանքում տեղի ունեն մի շարք լուրջ թերություններ։

Անդրկովկասյան յերկաթուղիների անբավարար աշխատանքի հիմնական և գլխավոր պատճառներն են.—Կուսակցության և կառավարության դիրեկտիվները միանձնավարության մասին չկատարելը և աշխատանքային դիսցիպլինայի չափազանց ցածը դրությունը բանվորների, ծառայողների, նույնպես և դիրեկցիայի, ռայոնների վարչության և արտադրական միավորների հրամանատարական կազմի մեջ։

Անդրկովկասյան յերկաթուղիների անբավարար աշխատանքի համար Անդրկովկասյան յերկաթուղիների դիրեկտոր ընկ. Պոզդեյեվին ու նրա ոգնական ընկ. Կապուլիա Ուրջոնիկիձեյին հանդիմանություն հայտարարել։

Հաղ. Ճան. Ժողկոմատի կարգավորող առաջադրությունը՝ ավելորդ վագոնները տեղափոխելու մասին՝ չկատարելու և շահագործումն անբավարար ղեկավարելու համար դիրեկցիայի եքսպլոատացիոն բաժնի պետ ընկ. Պապիտաշվիլուն հեռացնել աշխատանքից։

Քարշն անբավարար ղեկավարելու համար՝ քարշի պետ ինժեներ Մալիկովին հեռացնել պաշտոնից։ Քարշի պետ նշանակել ընկ. Վասիլի Ինդեկինին։

Ֆինանսական տնտեսության և տնտեսհաշվարկի ղեկավարության բացակայության համար ֆինբաժնի պետ ընկ. Ռահիմովին հեռացնել պաշտոնից։ Ֆինբաժինի պետ նշանակել ընկ. Նուրովին։ Անբավարար ղեկավարության և յերկաթուղիների դիրեկցիայի կարգադրություններն անթույլատրելի կերպով չկատարելու համար՝ պաշտոնից հեռացնել 3-րդ ռայոնի պետ ընկ. Կուրակինին։

Յերկաթուղիների դիրեկցիայի կարգավորիչ կարգադրությունները չկատարելու համար հանդիմանություն հայտարարել՝ յերկրորդ ռայոնի պետ ընկ. Կիկիլիձեին, յերրորդ ռայոնի շարժման պետ ընկ. Կոչեtկովին և յերկրորդ ռայոնի շարժման պետ ընկ. Կիկնաձեին։

Հաղ. Ճան. Ժողկոմատի կարգադրությունը՝ հին ռելսները տեղափոխելու մասին՝ չկատարելու համար հանդիմանություն հայտարարել դիրեկցիայի ուղու բաժնի պետ ընկ. Դիկարեվին։

Պարտավորեցնել՝ ընկ Դիկարեվի անձնական պատասխանատվությամբ՝ 15-որյա ժամկետում ուղևորել հին ռելսներն Հաղ. Ճան. Ժողկոմատի կարգադրերի համաձայն։

Յերկաթուղու բոլոր աշխատավորների ուշադրությունը հրավիրել դիսցիպլինայի խախտման անհանդուրժելի լինելու վրա, վոր յերկաթուղու վատ աշխատանքի և մեծ քանակությամբ պատահարների ու տնտեսհաշվարկի բացակայությամբ առաջացած գերծախքի գլխավոր պատճառն է հանդիսանում

Ավելի ծանր կլիմայական և կենցաղային պայմաններ ունեցող տեղամասերի բանվորների ու ծառայողների կենցաղային պայմանների բարելավումն ապահովելու նպատակով՝ սեպտեմբեր ամսից աշխատավարձի 15-ից մինչև 30 տոկոս հավելում սահմանել՝ 3-րդ ռայոնում—50 կայարանում, 4-րդում—12 կայարանում, յերկրորդ գոտում—6 կայարանում։

Դիրեկցիան և ԴՈՐՏՊՈՆ պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնեն այդ կայարանների բանվորական մատակարարման վերակառուցման համար, սահմանելով նրանց մատակարարման առաջնահերթություն։

Այդ կայարանների վերաբերմամբ անհապաղ սահմանել յերեխաներին դպրոցներն ընդունելու, բանվորներին և ծառայողներին հանգստյան տներն ու կուրորտներն ուղարկելու կարգը, այդ կայարանների բանվորներին ու ծառայողներին սպեցհագուստ մատակարարելն ապահովել, հավասարեցնելով նրանց առաջին կարգի բանվորներին և ապահովել, վոր այդ բանը մատնանշված կայարաններում կատարվի առաջին հերթին։

Յերկաթուղու վարչությունը պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնի այդ կայարաններում բնակարանային պայմանները լավացնելու համար և 1932 թ. 4-րդ յեռամսյակում և ամբողջ 1933 թվին լիովին վերացնել բնակատարածության պակասը, ապահովելով բոլոր բանվորներին ու ծառայողներին բնակարանային բավարար պայմաններով և այդ ժամանակի

ընթացքում լիովին վերջ տալով բանվորներին և ծառայողներին վագոններում տեղավորելու պրակտիկային։

ԴՈՐՏՊՈ-ի հետ միասին հիշված կայարաններում կազմակերպել՝ 3-րդ ռայոնի սահմաններում — 8 ճաշարան, 4-րդ ռայոնում — 4 ճաշարան, յերկրորդ ռայոնում — 1 ճաշարան, բանվորներին և ծառայողներին հասարակական սնունդ մատակարարելու համար։

Վերը հիշած կայարաններում կառուցել անհրաժեշտ քանակությամբ բաղնիսներ և կազմակերպել պահանջվող քանակությամբ շարժական բաղնիսներ։

Անհապաղ վերացնել ջրի մատակարարման թերությունները այն կայարաններում, որոնք սեղական խմելու ջուր չունեին, սահմանելով այդ կայարաններին մատակարարելու համար ջուր բերելը հաստատուն գրաֆիկով։

Յերկաթուղու դիրեկտորը և ԴՈՐՏՊՈ-ն պետք է անհապաղ կազմակերպեն բանվորներին ու ծառայողներին անասուններ, բանջարանոցների համար սերմեր մատակարարել և ոգնել նրանց յերկաթուղու սահմանակից հողերում հողամշակում ու անասնապահություն կազմակերպելու։ Այդ մատակարարումը պետք է կազմակերպել ԴՈՐՏՊՈ-ի միջոցով՝ վարկավորման հիմանքով։

Զակժելդորստրոյի պետ ընկ Սաբաշվիլին պետք է ապահովի Ղաթարի ճյուղի շարժման սկսելը և ժամանակավոր շահագործումը սեպտեմբերի 15-ից վոչ ուշ, մինչև Ոչեմիչեր — հոկտեմբերի 1-ից վոչ ուշ, մինչև Թքարչվելի — նոյեմբերի 15-ից վոչ ուշ։

ԱՅԺՄՅԱՆԻՑ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՇՆԱՆ-ԶՄՌՎԱՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ճանապարհների Հաղորդակցության Ժողկոմատի հրատարակած հրամանը մարտական ծրագիր է հանդիսանում աշնան — ձմեռվան փոխադրությունների նկատմամբ յերկաթուղային տրանսպորտը նախապատրաստելու մասին։

Կուսակցությունն ու նրա Կենտրոնական Կոմիտեն քանիցս մատնանշել են, վոր յերկաթուղային տրանսպորտը ժողովրդական տնտեսության նեղ տեղն է, վոր նա իր թույլ աշխատանքով հետ է պահում մեր յերկրի սոցիալիստական տնտեսության զարգացումը։ Այժմ էլ ամենայն ուժով պետք է շեշտել այդ, չնայելով վոր վերջին ժամանակներս տրանսպորտն անտարակույս վորոշ չափով բարելավել է իր աշխատանքը, 1932 թվի առաջին յեռամսյակում որական միջին բեռնավորումը հասցնելով 50,000 վագոնի, փոխանակ անցյալ տարվա առաջին յեռամսյակի 39,000 վագոնին։

Զուգերթ բրիգադների համամիութենական մրցանքը շատ յերկաթուղիներին ոգնեց ավելի լավ ոգտագործելու ներքին միջոցները և վորոշ հաջողություններ ձեռք բերել մանավանդ շոգեկառքերի զուգերթի ամրացման գործում։ 1931 թվի չորրորդ յեռամսյակում ապրանքատար վագոնի որական միջին վազքը հասավ 96,4 կիլոմետրի (1930 թվի նույն յեռամսյակին — 36,1 կիլոմետր եր)։ Ապրանքատար շոգեկառքի որական վազքը բարձրացավ 143,9 կիլոմետր (անցյալ տարի — 120,2 կիլոմ.)։

Սակայն յերկաթուղային տրանսպորտը՝ իր աշխատանքում անկասկածելի հառաջացում ունենալով հանդերձ 1932 թվի առաջին յեռամսյակում փոխադրությունների ծրագիրը միայն 83 տոկոս է կատարել։

Ինչու տրանսպորտը լիովին չի կատարել իր խնդիրները։ Տրանսպորտային կազմակերպությունները վատ եին նախապատրաստվել իրենց պլանը կատարելու համար։ Նրանց աշխատանքում դեռ շատ ավանդամոլություն եր մնացել և ոպորտունիզմ պրակտիկայում։

Բուռն կերպով աճող ժողովրդական տնտեսությունը հսկայական պահանջներ է առաջադրում տրանսպորտին։ Ներկա տարվա 4-րդ յեռամսյակում պետք է փոխադրել 89 միլիոն տոննա բեռներ, հետևաբար որվա միջին բեռնավորումը պետք է մեծացնել 65-66 հազար վագոնի։ Ապրանքատար շոգեկառքը պետք է անցնի որական 155 կիլոմետր, իսկ ապրանքային

վագոնը—120 կիլոմետր։ Միջին որեկան առևտրական արագությունը մի ժամում պետք է հասցնել 14,5 կիլոմետրի։

Մենք ֆանտազյորներ, վոչ իրական քաղաքագետներ կլինենք, յեթե վորոշենք, վոր աշնան-ձմեռվա փոխադրությունների առաջին ծրագիրը կկատարվի առանց պայքարելու՝ ուցմրցման ու հարվածայնության նոր ու վորակով ավելի բարձր կազմակերպման համար, տնտեսհաշիվ իրոք կիրառելու համար, ընկ. Ստալինի բոլոր վեց պայմանների համար։

Գարունն ու ամառը—տրանսպորտի ունակությունն ստուգելու ամիսներ են, թե վորքան արագորեն մոբիլիզացիայի է յենթարկվում յերկաթուղային պրոլետարիատի միլիոնավոր բանակը։ Գարունն ու ամառն ամենամեծ չափով պետք է ոգտագործվեն նրա համար, վոր ավելի բարձր աստիճանի վրա դրվի տրանսպորտի տեխնիկական զինումը, հասնելու պլանի կատարմանը և նախապատրաստվելու աշնան-ձմեռվա փոխադրությունների համար։

Յերկիրն ու կուսակցությունը պահանջում են, վոր վճռական ուղեմասերում կատարվեն անհրաժեշտ միջոցառումները—բարելավվի ճանապարհի պրոֆիլը, արհեստական սարքավորումներ շինվեն և կայարանային ուղիներ դցվեն։

Կառուցողական աշխատանքների առաջին ծրագրի կատարումը կարևոր մասն է հանդիսանում աշնան-ձմեռվա փոխադրությունների նախապատրաստության։

Վճռական նշանակություն է ստանում շոգեկառքերի պարկը։ Դա պետք է բարելավվի և լիովին պատրաստ վիճակի հասցնվի։ Կուսակցական կազմակերպությունները պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն շոգեկառքերի պարկի հետագա առողջացման վրա։ Ճանապարհների Ժողկոմատի հրամանի համաձայն առաջիկա ամիսներին 11,400 շոգեկառքեր պետք է նորոգվեն, առողջանան և հիվանդ շոգեկառքերի թիվը պետք է իջնի 17 տոկոսի։

Աշնան-ձմեռվա փոխադրությունների նախապատրաստության ժամանակը պետք է ամեն կերպ ոգտագործել նրա համար, վոր ժամանակին նորոգվեն վագոնները և հիվանդ վագոնների թիվն իջնի ամբողջ ցանցի վագոնային պարկի ընդհանուր քանակության 1,7 տոկոսին։

Աշնան-ձմեռային փոխադրությունների հաջողությունը շատ բանում կախված է ճանապարհային տնտեսությունից։ Այն ինչ, այդ բնագավառը դեռ ևս անհրաժեշտ ուշադրության չի արժանացել։ Ճանապարհային տնտեսությունը ամբողջ յերկաթուղային տրանսպորտի ամենահետամնաց մասն է կազմում։

Պետք է վերջ տալ այդ հետամնացությանը։ Մենք պետք է հիմնական նորոգում կատարենք 41,000 կիլոմետր գլխավոր ճանապարհի վրա, փոխենք ռելսեր ու կցվացքները, փոխենք ու ավելացնենք շպալները, սլաքային փոխանցումները և 613 կիլոմետր խճով ծածկենք։

Կուսակցական կազմակերպություններն իրենց յեռանդուն կոնկրետ աշխատանքով ճանապարհային տնտեսության մեջ պետք է ապահովեն դրամագլխային միլիոնավոր ներդրումների ռացիոնալ ոգտագործումը։ Ամենախիստ պայքար պետք է հայտարարել դրամագլխային ներդրումների մահացմանը, անտեղի ծախսերին և միջոցների ցան ու ցիր անելու։ Շահագործական ամբողջ աշխատանքը պետք է բարձրացնել նոր ու վորակով ավելի բարձր աստիճանի։ Մենք պարտավոր ենք ճիշտ հաշվի առնել և նույնպես ճիշտ՝ ապրանքների հոսանքի համապատասխան կերպով զետեղել վագոնային պարկը ըստ ճանապարհների և ճշտել վագոնների ամրապնդումը ճանապարհներին։

Ամրապնդել կադրերը, համալրել մարշրուտային գրուպաները ու տեսակավորող կայարանների ռայոնների վարչությունները, բարձրացնել նրանց վորակավորումը, ճշտել մարշրուտացման սխեմաները, բարելավել մարշրուտների միաժամանակ բարձելն ու բեռները թափելը, այս է աշնան-ձմեռվա փոխադրությունների նկատմամբ նախապատրաստվելու կարևորագույն խնդիրներից մեկը։ Այդ փոխադրության ամենից ավելի կարևորագույն ողակներն են՝ բանուժի ուղիղ դասավորումը, աշխատանքի վարձատրության մեջ հավասարեցման իսկական ու լիովին լիկվիդացիան, վճռական պայքարը բանուժի ավելցուկների դեմ, բոլշևիկյան պայքարը աշխատանքի արտադրողականությունը մեծացնելու համար, կոնկրետ ղեկավարության ապահովումը և տրանսպորտի ամբողջ աշխատանքում միանձնյա վարչության հաստատուն կիրառումը։

Յերկաթուղային տրանսպորտի դժվարությունները մեծ չափով բացատրվում են բանուժի դեռ ևս մեծ հոսունությամբ և այդ վոչ միայն բանվորների շարքերում, այլ և ղեկավար ինժեներ-տեխնիկական կադրերի շրջանում։ Այդ, ամենից առաջ բացատրվում է բանվորների նյութական—կենցաղային դրության բարելավման ասպարիզում ունեցած վոչ բավարար աշխատանքով։

Յերկրորդ ու յերրորդ յեռամսյակներին պետք է արմատապես ապահովվի այդ բնագավառի բարելավումը։ Պետք է ընդլայնել ճաշարանների, խոհանոց—ֆաբրիկաների, հացափուռ-

ների, խանութների և այլն ցանցը։ Տրանսպորտային սպառողական ընկերությունները պարտավոր են ուժեղ կերպով զարգացնել բանջարանոցային տնտեսությունը, ճագարաբուծությունը, մանր անասնապահությունը, թռչնապահությունը և ձկնորսությունը։

Պետք է վորոշել ամեն մի տասնորյակի, ամեն մի որվա խնդիրները։ Պետք է կոնկրետ պլաններ կազմել աշխատանքների ճշգրիտ որացույցային ու գրաֆիկ կատարումով, ամեն մի գործի համար պատասխանատու անձեր նշանակելով, ամբողջ գործը վերահսկողության ու ստուգման յենթարկելով։

Յերկաթուղային տրանսպորտը նոր ղեկավարության գլխավորությամբ հայտնի հառաջացում է ձեռք բերել իր աշխատանքում։ Նա կարողացել է մասսաներին բոլշևիկյան մոբիլիզացիայի յենթարկել՝ համառ ու անձնուրաց պայքար մղելու կենտկոմի լենինյան վորոշումներն իրականացնելու, ընկ. Ստալինի պատմական ցուցումների, կուսակցության հիմնական գծի համար՝ ընդդեմ ոպորտունիզմի և բյուրոկրատիզմի։

Նոր ու ել ավելի նշանավոր հաջողությունները կարող են և պետք է ձեռք բերվեն միայն յերկաթուղայինների միլիոնավոր բանակի հետագա մոբիլիզացիայի միջոցով՝ հնգամյակի յեզրափակիչ տարվա աշնան-ձմեռվա փոխադրությունների մարտական նախապատրաստության համար, միմիայն կուսակցության վորոշումները յերկաթուղային տրանսպորտի բնագավառում ել ավելի հաստատուն կերպով կատարելու հիման վրա։

(«Պրավդա»-ի մայիսի 13-ի առաջնորդողից)

ՀՍՍՀ Գրքի պալատ
ՀՍՍՀ — ՍՍՍՌ
Ա. Մասիսյան
Ինչիկյան Ակակի

Տեխ. խմբ. Կ. Թաթանյան
Սրբագրիչ — Նույնը

AQ(в) F. MQ və BQ Metod вyrosu 1932-33-cy jeni pajъz-qьş jyk daşьnmasь haqqьnda tapşьrьq № 1 və iş materiallarь.

Baş Mətbuat Mydirliji vəkili № 6081 ADN 625 Sif
AZƏRNƏŞR mətbəəsində basьldь, Bakь Bolşoj-Morsqoj
kycələrin tinində № 16/36

ՀՀ Ազգային գրադարան
NL0298304